ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնք, ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, Հեռ. (322) 6-99-02, margahovit.lori@mta.gov.am

N 27
01 փետրվար 2017թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան.

Ներկայացնում եմ Մարգահովիտ համայնքի ավագանու թիվ, թիվ 1-Ա, 2-Ն, 3-Ա, 4-Ա, 5-Ա, 6-Ն որոշումները:

Առդիր՝ 7 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ**

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ս. Գասպարյան
Հեռ. /374/ 93968825

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, (322) 6-99-02, margahovit.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 1-Ա

ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով՝

Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Մարգահովիտ համայնքի ավագանու 2017թ. հունվարի 25-ի նիստի օրակարգը:

Օրակարգ

Մարգահովիտ համայնքի ավագանու 2017թ.-ի հունվարի 25-ի նիստի.

1. Մարգահովիտ համայնքի 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին:
2. Սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն տրամադրելու մասին:
3. Համայնքի մի խումբ բնակիչներին առանձին ծուխ գրանցվելու մասին:
4. Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
5. “Մարգահովիտի երիտասարդական կենտրոն” ՀԿ-ի կողմից շահած ծրագրին ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին:
6. 2016թ. բյուջեի վարչական մասում տնտեսված գումարի նպատակային ուղղումը 2017թ. բյուջեի ֆոնդային մաս:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԺՈՐԱ
3. ԴԱՎԹՅԱՆ ՄԱՆԱՆԱ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԷՄԻԼԻԱ
6. ՊՈՍՏՈԼԱԿՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
7. ՍԱՐԴԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
8. ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
9. ՍԱՖԱՐՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, (322) 6-99-02, margahovit.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 2-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 'Տեղական ինքնակառավարման մասին' Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերով, 'Տեղական տուրքերի և վճարների մասին' Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով և 'Իրավական ակտերի մասին' Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի գ) ենթակետով՝

Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ գյուղական համայնքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Ուժը կորցրած ճանաչել Մարգահովիտ համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 30-ի 'Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ գյուղական համայնքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին' N 39-Ն որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԺՈՐԱ
3. ԴԱՎԹՅԱՆ ՄԱՆԱՆԱ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԷՄԻԼԻԱ

6. ՊՈՍՏՈԼԱԿՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

7. ՍԱՐԴԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ

8. ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ

9. ՍԱՖԱՐՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, (322) 6-99-02, margahovit.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 3-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Մարգահովիտ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 41-Ա որոշմամբ, հիմք ընդունելով համայնքի բնակիչների կողմից ստացված դիմումները և համայնքի անապահով ընտանիքների պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏԻՆՅԱՆ ԱԾՈՏ
2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԺՈՐԱ
3. ԴԱՎԹՅԱՆ ՄԱՆԱՆԱ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԷՄԻԼԻԱ
6. ՊՈՍՏՈԼԱԿՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
7. ՍԱՐԴԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
8. ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
9. ՍԱՖԱՐՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, (322) 6-99-02, margahovit.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 4-Ա

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառարավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին>> թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17 կետի պահանջների համաձայն, ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21 կետով, հիմք ընդունելով <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի>> 19.12.2016թ, թիվ 107 դրական եզրակացությունը, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 2.46226 հեկտար և 67.62142 հեկտար գյուղատնտեսական նշանակության խոտհարք /կադաստրային ծածկագիր՝ 06-070-0235-0027/ փոխադրել անտառային հողերի կատոգորիա՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության <<Հայանտառ>> ՊՈԱԿ-ի <<Գուգարքի անտառտնտեսություն>> մասնաճյուղի կողմից անտառտնկման աշխատանքներ իրականացնելու համար:
2. Առաջարկել համայնքի ղեկավար Ս.Անանյանին ապահովել իրավունքների պետական գրանցումը Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում և համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԺՈՐԱ
3. ԴԱՎԹՅԱՆ ՄԱՆԱՆԱ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԷՄԻԼԻԱ
6. ՊՈՍՏՈԼԱԿՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
7. ՍԱՐԴԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
8. ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
9. ՍԱՖԱՐՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, (322) 6-99-02, margahovit.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 5-Ա

ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԱՌԱՆՁԻՆ ԾՈՒԽ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ վիճակագրության պետական խորհրդի ցուցումների, տնտեսական գրքում անձնական հաշիվներ բացելու և փակելու կարգի (9 ա) կետ) և հիմք ընդունելով համայնքի բնակիչների դիմումները առանձին ծուխ գրանցելու վերաբերյալ.

Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է.

Հարգել առանձին տնտեսություն գրանցվելու խնդրանքով դիմաց բնակիչների դիմումները և գրանցել առանձին ծուխ՝ համաձայն հավելվածի:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԺՈՐԱ
3. ԴԱՎԹՅԱՆ ՄԱՆԱՆԱ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԷՄԻԼԻԱ
6. ՊՈՍՏՈԼԱԿՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
7. ՍԱՐԴԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
8. ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
9. ՍԱՖԱՐՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մարգահովիտ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, (322) 6-99-02, margahovit.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒՆՎԱՐԻ 2017թվականի N 6-Ն

ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՈՒՄ ՏՆՏԵՍՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ 2017Թ ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍ ՈՒՂՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ ՀՀ օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով.

Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է.

1. 2016թ. բյուջեի տարեվերջյան մնացորդը նպատակաուղղել 2017թ. բյուջեի ֆոնդային մաս:
2. Գումարը նախատեսել Ճանապարհների բարեկարգման, սրահի բարեկարգման, համայնքի դպրոցի սպորտդահլիճի վերանորոգման, համայնքի նախկին փոստի շենքի գնման, համայնքապետարանի շենքի ջեռուցման լոկալ համակարգ տեղադրելու, փողոցների լուսավորության և "Շիրմատուն" ՀՈԱԿ-ի ծառայություններն ընդլայնելու նպատակով կատաֆալկ ձեռք բերելու համար:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏԻՆՅԱՆ ԱՇՈՏ
2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԺՈՐԱ
3. ԴԱՎԹՅԱՆ ՄԱՆԱՆԱ
4. ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՄԱՆ
5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԷՄԻԼԻԱ
6. ՊՈՍՏՈԼԱԿՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
7. ՍԱՐԴԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԳ
8. ՍԱՐԴԱՐՅԱՆ ՍԵՐՅՈԺԱ
9. ՍԱՖԱՐՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ